

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ << ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ >> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

<< ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-
ՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՇԱԿԵՐՏԻ
ՈՒՍՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ>>

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝

ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝

ԶՈՀՐԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԴՊՐՈՑ՝

<< ԾՈՎԻՆԱՐԻ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>

2022 թ.
ՄԱՐՏՈՒՆԻ

Բովանդակություն

1. Ներածություն -----	2
2. Գլուխ 1: Տարբերակված ուսուցման փուլերը -----	3
1.1 Տարբերակված ուսուցում կազմակերպելիս ուսուցչի նպատակները -----	4
3. Գլուխ 2: Ինչպես կազմակերպել տարբերակված ուսուցումը -----	5
2.1 Չափորոշիչների պահանջներին համապատասխան հայտորոշման անցկացում - - -	5
2.2 Կազմել առարկայի ուսումնական ծրագրերի երեք տարբերակ -----	5
2.3 Խմբերի բաժանում՝ ըստ հայտորոշման արդյունքների-----	6
2.4 Ուսումնական պարապմունքների նախապատրաստում -----	6
2.5 Հետադարձ կապի իրականացում -----	7
4.Գլուխ 3: Դպրոցի տարբերակված դասավանդման առավելություններն ու թերությունները -----	8
3.1 Տարբերակված ուսուցման մոտեցումը	
5. Տարբերակված առաջադրանքներով դասի օրինակ -----	9
6. Դասալսում 1 -----	10- 12
7. Դասալսում 2 -----	13 - 16
8. Եզրակացություն -----	17
9. Գրականություն -----	18

Ներածություն

Տարբերակված ուսուցման նպատակն է ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով:

Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գրոծողություն նպատակը, բովանդակությունը, մեթոդները, ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Այս մեթոդը թույլ չի տալիս աշակերտին զգալ թույլ ուժեղ աշակերտների մեջ: Բոլորը հավասար են այստեղ, բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասը, բովանդակությունը:

Ուսուցիչը հաջողության կհասնի միայն այն դեպքում, երբ անցկացրած դասը հետաքրքրի ու բովանդակալից կլինի դասարանի բոլոր աշակերտների համար:

Գլուխ 1

Տարբերակված ուսուցման փուլերը

Տարբերակված ուսուցումն իրականացվում է երեք հիմնական փուլերով.

1. Ճանաչել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները:
2. Խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների:
3. Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ներդասարանային տարբերակում՝ ըստ տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարման:

Ամենատարածված ներդասարանային տարբերակման ձևը սովորողների կողմից տարբեր բարդության աստիճանի առաջադրանքների կատարումն է:

Օրինակ

• 1-ին մակարդակում հանձնարարվում է աշակերտների կարգալ ուսումնական նյութը, պատմել՝ առանձնացելով գլխավոր մտքերը:

• 2-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտների կարգալ ուսումնական նյութը կազմել պլան և հարցադրումներ:

• 3-րդ մակարդակում հանձնարարվում է աշակերտների կարգալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

Տարբերակված առաջադրանքները կարելի է տալ տարբեր ձևերով.

- Ուսուցիչն ընտրում է առաջադրանք յուրաքանչյուր աշակերտի համար:
- Աշակերտն ինքն ընտրում իր առաջադրանքը:

Այս դեպքում ուսուցիչը պարտավոր է նախապես սովորողներին ներկայացնել առաջադրանքի բարդությունը և խորհուրդներ տալ, թե ո՞ր առաջադրանքն ընտրի:

2-րդ դեպքում ուսուցիչն կաչոց է ներկայացնել առաջադրանքի բարդությունը, բայց ընտրությունը թողնել աշակերտին: 3-րդ դեպքում աշակերտն ինքն է որոշում առաջադրանքի բարդությունը, ինքն էլ ընտրում: Կամավոր ընտրության սկզբունքով կատարվող առաջադրանքները կարող են նաև աշակերտներն իրենք ընտրել և առաջարկել: Առաջադրանքները կարող են նպատակաուղղված լինել թեմայի յուրացմանը կամ էլ բացթողումների լրացմանը:

Տարբերակված ուսուցման դեպքում աշակերտները կարող են ստանալ ծրարներում համապատասխան հրահանգումներով առաջադրանքներ. Գծագրեր նկարներ:

Աշակերտներն անհրաժեշտության դեպքում կարող են դիմել դրանց օգնությանը:

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտներին որոշել թե, ուսումնական նյութի յուրացումը ո՞ր մակարդակում կարող է յուրացնել: Մակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից, և ուսուցիչը ուսումնական նյութը ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսն՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով տարբերակումն հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները:

1.1 Տարբերակված ուսուցում կազմակերպելիս ուսուցչի նպատակները

Ուսումնական որոշակի նյութի ուսումնասիրությունից և ուսումնասիրության արդյունքները չափելուց հետո դասարանը << բաժանվում է >> խմբերի.

1-ին խումբ.

ուսումնական նյութը յուրացրած աշակերտներ, որոնց հետ անհրաժեշտ է տանել աշխատանքներ գիտելիքների ընդլայնման և խորացման ուղղությամբ:

2-րդ խումբ

աշակերտներ, որոնք լավ չեն յուրացրել ուսուցման նյութը և ունեն բացթողումներ: Նրանց համար մշակվում են համապատասխան առաջադրանքներ

3-րդ խումբ

աշակերտներ, որոնք ունեն խնդիրներ ուսումնական նյութի յուրացման հարցում: Նրանց հետ տարվում են հատուկ աշխատանքներ;

2-րդ խմբի աշակերտների համար որպես խորհրդատու և ուսուցչի օգնական կարող են լինել առաջին խմբի աշակերտները, իսկ երրորդ խմբի աշակերտների համար՝ առաջին և երկրորդ խմբի աշակերտները:

Միանշանակ հետևելով այս նպատակադրումներին, աշակերտների խմբերում անպայման կունենանք դրական տեղաշարժ:

Տարբերակված ուսուցման ժամանակ ուսուցիչը իր ձեռքի տակ պետք է ունենա բազմաբնույթ և բազմաշերտ առաջադրանքներ:

Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռնում լիովին բացահայտել երեխայի ստեղծագործական հնարավորությունները, մտավոր կարողությունները, ապահովել անհրաժեշտ պայմաններ երեխայի անձի ձևավորման և զարգացման համար հաշվի առնելով նրա տարիքային առանձնահատկությունները, անհատականությունը: Տարբերակված ուսուցումը, բնականաբար, փոխում է նաև ուսուցչի գործառնությունները: Ուսուցչի գլխավոր խնդիրն է դառնում աշակերտի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը, որը ենթադրում է.

- հաղորդակցության ժողովրդական, հարգալից ոճ.
- բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի տարիքային, անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը:
- աջակցող, խրախուսող, բարիացկամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով:
- Գիտելիքներ և կարողություններձեռք բերելու դրդապատճառների ապահովումը:

[4, էջ 14]

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում:

Մանուկ Մկրտչյանի << Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը >> մենագրության մեջ ձևակերպված են ուսուցման կարիսադրությունները.

Առաջին՝ յուրաքանչյուր երեխա, որը առողջ է, ի վիճակի է յուրացնել ցանկացած ուսումնական նյութ:

Երկրորդ՝ երեխաները միմիանցից տարբերվում են ոչ թե այս կամ այն նյութը յուրացնելու իրենց հնարավորություններով, այլ այդ նյութը յուրացնելու իրենց անհատական ձևով ու միջոցներով:

Երրորդ՝ աշակերտի հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ որոշվում է ոչ թե այդ նյութի բովանդակությամբ, այլ այդ նյութի յուրացման գործընթացում աշակերտի գործողությունների հաջորդականության [1, էջ 47]:

Ըստ վերընշված կանխադրույթների երեխաների զարգացման հոգե – ֆիզիոլոգիական տարբերությունները թելադրում են ուսուցման տարբերակման անհրաժեշտությունը: Ուսուցման տարբերակման սկզբունքը միայն կարող է ստեղծել բարենպաստ պայմաններ անձի կայացման և նրա անհատական առանձնահատկությունների բացահայտման համար: Այս աշխատանքի եղանակը ուսուցչին հնարավորություն չի տալիս հաշվի առնել առանձին աշակերտների միջև առկա տարբերությունները: Աշակերտների միջև էական տարբերությունները անխուսափելի են դարձնում դասավանդման մեթոդաբանության մեջ նոր մոտեցումների կիրառումը [2, էջ 2]:

Հղում՝ համացանց.

<< Մանկավարժություն >> 2017-6, էջ 40

Գլուխ - 2

Ինչպես կազմակերպել տարբերակված ուսուցումը

1. Չափորոշիչների պահանջներին համապատասխան հայտորոշման անցկացում

Հայտնի է, որ դասարանում ընդգրկվում են տարբեր մակարդակների աշակերտներ: Աշխատանքը առավել արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է բացահայտել աշակերտների նախնական գիտելիքների և կարողությունների մակարդակը:

2. Կազմել առարկայի ուսումնական ծրագրերի երեք տարբերակ՝ կախված բովանդակության բարդության աստիճանից

Դա հնարավորություն է տալիս իրականացնելու ուսուցման մեջ տարբերակված մոտեցման գաղափարները: Ծրագրի առաջին տարբերակը ապահովում է նյութի յուրացումը նվազագույն պահանջների մակարդակով: Այդ մակարդակի յուրացումը պարտադիր է յուրաքանչյուրի համար: Ցանկացողը կարող է անցնել երկրորդ մակարդակին: Իսկ որոշ աշակերտներ կարող են ձեռնամուխ լինել ծրագրի երրորդ՝ բարդացված մակարդակի յուրացմանը:

3. Խմբերի բաժանում՝ ըստ հայտորոշման արդյունքների

Խմբերը պետք է ունենան միատարր կառուցվածք, միևնույն խմբերի մեջ ներառված աշակերտների պետք է տրվի նույն առաջադրանքը: Պարտադիր չէ, որ խմբի անդամները համագործակցեն միմիջանց հետ, տրված առաջադրանքները նրանք կարող են կատարել ինքնուրույն, իրարից անկախ: Նման դեպքերում հնարավոր է ստեղծել ավելի մեծ խմբեր: Այնուհանդերձ, եթե առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է, որ խմբի անդամները համագործակցեն միմիջանց հետ, ապա խմբում պետք է ընդգրկված լինի ոչ ավել, քան 3-5 աշակերտ: Տարբերակման այս եղանակը նպաստում է ուսման դժվարություններ կամ սահմանափակ կարողություններ ունեցող աշակերտների ինտեգրումը: Աշակերտները ընդգրկվում են խմբերում ըստ իրենց ընդունակությունների: Այդ աշակերտները իրենց առաջադրանքները կատարում են ինքնուրույն կամ խմբի մյուս անդամների հետ միասին: Տարբերակում կատարելը չպետք է դառնա աշակերտների << պիտակավորման >> պատճառ:

4. Ուսումնական պարապմունքների նախապատրաստում

Ուսումնական պարապմունքների նախապատրաստական փուլում ուսուցիչը հետևում է առարկայի ամբողջական յուրացմանը, պարզում ուսումնական առարկայից աշակերտների գիտելիքների և կարողությունների մակարդակը, արձանագրում է գիտելիքների պակասի պատճառները, նոր ուսումնական նյութը յուրացնելու պատրաստվածության աստիճանը, որոշում է ուսումնասիրման ենթակա հաջորդ ուսումնական նյութի բովանդակությունը, ընտրում և մշակում է անհրաժեշտ դիտակետիկ նյութը: Մեկ դասի ընթացքում խմբի բոլոր անդամները ուսումնասիրուն են նույն նյութը, սակայն այդ թեմայի ուսումնասիրման ժամանակ դասի շրջանակում թույլատրվում է կատարել տարբեր տեսակի աշխատանքներ: Կարևոր է, որ դասի վերջում բոլորը յուրացնեն այդ թեման և պատրաստ լինեն անցնելու հաջորդ թեմային: Հիշենք, որ դասարանում կան տարբեր ընդունակություններ ունեցող աշակերտներ և դրանց մի մասը կարող են ուսուցչի ընտրած նյութը յուրացնել ավելի արագ: Ուսուցիչը չի կարող բավարարվել նրանց չափորոշչի նվազագույն պահանջներին համապատասխան սովորեցնելով: Այդ աշակերտները իրավունք ունեն իրենց հնարավորություններին համապատասխան կրթություն ստանալ: Անհրաժեշտ է ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ, որոնք նախատեսում են նաև անհատական մոտեցում ուսուցման ժամանակ:

Յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա տվյալ պահին իր համար օպտիմալ ծավալի աշխատանք:

1-ին մակարդակի աշակերտների համար պետք է նախատեսել ավելի հեշտ, ավելի պարզ, ավելի քիչ տեղեկություններ, ավելի շատ նկարներ և ցուցադրումներ, ավելի խաղային, անհրաժեշտության դեպքում՝ ավելի մեծ տառաչափի օգտագործում

2-րդ մակարդակի աշակերտների համար պետք է նախատեսել ավելի հեշտ՝ << Միջին >> աշակերտի համար մշակված աշխատանքային թերթիկ:

3-րդ մակարդակի աշակերտների համար պետք է նախատեսել ավելի բարդ, ավելի մեծ ծավալով տեղեկություն (հիմնականում բանավոր):

5 Հետադարձ կապի իրականացում

Դասավանդման այս եղանակը կարող է իսկապես արդյունավետ լինել, եթե ուսուցիչը հետամուտ լինի ուսման բազմամակարդակ գործընթացին և կարողանա այն իրագործել: Հետաքրքրությունն առաջանում և պահպանվում է այն ժամանակ, երբ ուսումնասիրվող նյութը հասկանալի և յուրացված է, իսկ դա ապահովում է սովորողի գործունեությունների հաջողականությամբ: Երբ աշակերտը ինչ, որ քայլ, ինչ, որ գործողություն ստացվում է, նա պատրաստ է անել հաջորդ քայլը, հաջորդ գործողությունները:

Առաջավոր աշակերտների և ետ մնացողների հետ անհատական աշխատանք կազմակերպելով, ուսուցիչը ապահովում է դասարանի բարձր առաջադիմությունը: Թույլերը հնարավորություն են ունենում ինքնուրույն աշխատելու և առավել ընդունակները բարոյապես չեն ճնշում նրանց: Բարձրանում է աշակերտների ակտիվությունը: Հետաքրքրությունները բավարարելու աշխատանքի մեջ ներգրավելու համար ծրագրի սահմաններում նրանց պետք է տալ լրացուցիչ առաջադրանքներ: Այս կարգի առաջադրանքներն են, որ բարձրացնում են երեխաների հետաքրքրությունը, մտածողությունն և ուսումնա որակը:

Հղում՝ Գիտամեթոդական ամսագիր «Մանկավարժություն» **2017 – 6**
Միրանուշ Թադևոսյան՝ «Տարբերակված և անհատական ուսուցումը
դպրոցում» էջ **40-45**

Գլուխ 3

Դպրոցի տարբերակված դասավանդման առավելություններն ու թերությունները

Տարբեր աշակերտների հետաքրքրությունները բավարարելու համար՝ ուսուցիչը օգտվում է ուսուցման տարբեր մեթոդներից:

Դասավանդված դասարանում ուսուցիչները գիտակցում են, որ բոլոր աշակերտները տարբեր են և պահանջում են տարբեր ուսուցման մեթոդներ, որպեսզի հաջողված լինեն: Դրա համար ավանդական ուսուցման մեթոդներից բացի ուսուցիչը անցնում է տարբերակված ուսուցման մեթոդներին:

Տարբերակված ուսուցման մոտեցումը

Յուրաքանչյուր մ աշակերտի տեսակետից կարելի է պնդել, որ տարբերակված ուսուցումը ավանդական ուսուցման նկատմամբ հստակ առավելություններ ունի: Տարբերակման նպատակն է տարբեր դասավանդման ոճերի կիրառումը՝ ապահովելու, որ աշակերտները կարողանան սովորել տարբեր ձևերով, բայց նույն կամ համանման արդյունքներով: Տարբերակումը նպատակ ունի խթանել ստեղծագործությունը՝ օգնելու աշակերտներին ավելի ինտուիտիվ կերպով հասկանալ հասկացությունները: Երբ տարբերակված առաջադրանքը կարող է օգտագործվել ցանկացած առարկայական ոլորտներում: Այն կարող է ներառել

- Դասագրքեր տեսողական և բառախաղ սովորողների համար:
- Աուդիո գրքերով լսողական աշակերտների տրամադրում:
- Կինեսթետիկ աշակերտների ինտերակտիվ նշանակումը օնլայն:
- Տակտիկական աշակերտների բազմապիսի զգայական, ուսուցողական նյութերի տրամադրում:

Նմանատիպ հանձնարարությունները կազմված կլինի այնպես, թե ինչպես է անհատական ուսանողը մոտենում սովորելուն: Ոմանք կարող են հանձնարարությունը կատարել թղթի վրա կամ նկարում, իսկ մյուսները կարող են ընտրել բանավոր զեկույց: Տարբերակված դասավանդումը ունի որոշ հիմնական առավելություններ ավանդական դասավանդման նկատմամբ:

- Տարբերակումը կարող է արդյունավետ լինել ինչպես առողջ աշակերտների, այնպես էլ հաշվանդամություն ունեցող անձանց համար:
- Երեխաների ընտանիքները նշանակում է, որ նրանք ավելի շատ պատասխանատվություն են ստանձնում իրենք՝ սովորելու համար:
- Ուսման մեջ ներգրավվածությունը ձգտում է ավելի ուժող լինել, քանի, որ այն վերաբերվում է երեխաներին, որպես աճի հնարավորություն ունեցող անհատներ:

Ֆիքսված կողմում տարբերակված դասավանդումը ունի իր սահմանափակումները.

- Տարբերակված ուսուցումը ուսուցիչներից ավելի շատ ժամանակ է պահանջում դասի պլանավորման համար
- Այն կարող է պահանջել ավելի շատ ռեսուրսներ դպրոցի համար:
- Շատ դպրոցներ չունեն մասնագիտական զարգացման ռեսուրսներ, դասասենյակը պատշաճ կերպով կահավորելու համար:

Տարբերակված առաջադրանքներով դասի օրինակ

Դասի տեսակը. Ամրապնդման դաս

Թեմա<<Ժամային գոտիներ>>**Դասի նպատակը.** Աշակերտների գիտելիքների ամրապնդումը, կրթության որակի բարձրացում: **Առաջադրանքներ.**

1) Իմանալ ժամային գոտիների տարբերության պատճառները:

Մշակել հաշվարկային հմտություններ:

2) Մշակել ժամային գոտիները աստիճաններով և աշխ. Երկայնությամբ հաշվարկելու ունակություններ. Բացատրել ինչ սկզբունքով են կատարել ժամային գոտիների հաշվարկը:

3) Մշակել ժամային գոտիների հետ աշխատելու ունակությունը. Մշակել մտավոր գործողություններ, վերլուծություն, համեմատություն, ընդհանրացում:

Առաջադրանքներ.

Գիտելիք.

Ինչ են տևական և գոտիական ժամանակները, ինչպես են դրանք որոշում:

Հասկանալով:

Ես կկարդամ ձեզ համար սահմանումներ, և դուք եթե համաձայն եք՝ կապույտ քարտ, եթե համաձայն չեք՝ կարմիր:

Ժամային գոտին գտնելու համար բավական է իմանալ աշխ. Երկայնությունը:

Երկու քաղաքների ժամերի տարբերությունը որոշելու համար անհրաժեշտ է իմանալ դրանց աշխ. Երկայնության տարբերությունը:

Ժամային գոտու տարածքը կազմում է 15, երկրագունդը պայմանականորեն բաժանել են 24 ժամային գոտու և առանձնացվել է հետևյալ կերպ՝ գրոյական միջօրեականից դեպի արևելք և արևմուտք գծվել են 7 30՝ միջօրեականները ստացվել է մի գոտի, որն ընդգրկում է 15 :

Դիմում.

Առաջադրանքի լուծում:

Որքան կլինի Երևան (արլ. ե. 44 30) և Բոմբեյ (արլ. ե. 73) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը:**Վերլուծություն.**

Որ ժամային գոտիներում են գտնվում Երևան և Բոմբեյ քաղաքները, և հաշվել ժամային գոտիների տարբերությունը:

Կատարեք առաջադրանքի լուծման պլան:

Գնահատեք ձեր առաջադրանքը

3 ճիշտ պատասխանի դեպքում՝ կարմիր դրոշակ

2 ճիշտ պատասխանի դեպքում՝ դեղին դրոշակ

1 ճիշտ պատասխանի դեպքում՝ սպիտակ դրոշակ

Դասապլան

Հեղինակ ուսուցիչ՝ Զոհրակ Մելքոնյան

Առարկա	Աշխարհագրություն
Դասարան եվ կիսամյակ	10-րդ դաս., առաջին կիսամյակ
Թեմայի գլուխ եվ թեմա	Երկրագունդ, աշխարհագրական թաղանթ, ժամային գոտիներ
Օգտագործվող նյութեր՝	1.Դասագիրք – Աշխարհագրություն-10, Մ.Մանասյան, 2010, <<Զանգակ 97 գրատուն>>, էջ 68-71 2. Գլոբուս, քարտեզներ:
Ամբողջական պատկեր, դասի նպատակ	Մովորողները արդեն գիտեն... Թեպտույտներ է կատարում երկրի մոլորակը: Ինչ

	<p>ուղղությամբ և ինչ ժամանակահատվածում է պտտվում երկիրն իր առանցքի շուրջը: Երկրի օրական պտույտի աշխարհագրական հետևանքները:Այս դասին սովորողները կհմանան կամ դասի նպատակն է...</p> <p>Ժամային գոտիների սահմանման պատճառները, ժամային գոտու աստիճանային տարածքը, ժամային գոտիների հաշվարկների սկզբունքները: Այսօրվա դասի գիտելիքները կօգտագործեն հաջորդ դասերին... Կարողանա հաշվել ժամային գոտիների տարբերությունը, տարբերությունների պատճառները, ինչպես են որոշում տեղական եվ գոտիական ժամանակները: Այս դասի թեման կապվում է իրական կյանքին հետեվյալ կերպ... Իմանա երկրի վրա սահմանված ժամային տարբերությունների պատճառները: Կարողանա հաշվել ժամային գոտիների տարբերությունը տարբեր քաղաքներում:</p>
Վերջնարդյունքները	<p>Աշակերտը կկարողանա.</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել ժամային գոտիների բաժանման սկզբունքների պատճառները: • Մեկնաբանել ժամային գոտիների ձևավորման սկզբունքները և ինչպես են անցկացվում ժամային գոտիների սահմանները:
Դասի ընթացք/ընտրված մեթոդ/ներ	<ol style="list-style-type: none"> 1. Ներածական մաս-Աստիճանական հանձնարարության մշակում (7ր) 2. Հիմնական մաս-<<Տուր մեկը եվ ստացիր մեկ ուրիշը>>, <<Տարբերակված ուսումնառություն>> մեթոդներ (25ր) 3. Ամփոփում – Հայտորոշիչ առաջադրանք (13ր)
Տերմիններ	Ժամային գոտի, գոտիական և տեղական ժամանակ, ամսաթվի փոփոխման գիծ, դեկրետային ժամանակ:
Տնային աշխատանք	Հանձնարարում եմ իրագործել հետևյալ. Կատարել դ.խ-ից՝ էջ 71 խ.8:

ՄԵԹՈԴ. <<Տուր մեկը և ստացիր մեկ ուրիշը>>. <<Տարբերակված ուսումնառություն >> Առարկա/թեմա – Երկրագունդ, աշխարհագրական թաղանթ, ժամային գոտիներ, դաս 5, էջ 68-71

Գործողություն	Հստակեցնող ուղղորդող կետեր, հստակ ձևակերպումներ հարցեր, գաղափարներ և այլն	Տևող:
Սովորողներին խնդրում եմ ուշադիր կարդալ առաջին աշխատանքի հարցերը և պատասխանները ներկայացնել:	Առաջադրում եմ հարց. Ի՞նչ գիտեք ժամային գոտիների մասին և լսում պատասխանները:	7
Դասարանը բաժանում եմ		

<p>գույգերի մեկ երկու հաշվով, որպեսզի միմյանց կողքին մշտապես նստող գույգերը սովորեն նոր մարդկանց հետ աշխատել</p>		
<p>Զույգերին աշխատանքային թերթիկները</p> <p>Խնդրում եմ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ուսումնասիրի իր տեքստը և աշխատանքի ընթացքում թերթիկներում կատարի գրառումներ</p>	<p>Նախապես պատրաստում եմ մեկ գույգ տեքստ/նյութ, որոնք հնարավոր է բաժանել աշակերտներին: Տեքստերը կցում եմ այստեղ հղումով՝ հավելված 1, հավելված 2, իսկ ստորև տրամադրում եմ դրանց Ամփոփ Անվանումները ԱԱ1 Ժամային գոտիներ: Ժամային գոտիների ձևավորման պատճառները և տարբերությունները: ԱԱ2 Ժամային գոտու տարածք միևնույն զուգահեռականի վրա գտնվող տարբեր քաղաքների միջև ժամերի տարբերությունը: ԱԱ3 Ժամային գոտու տարածքը և ինչպես են դրանք հաշվարկում:</p>	<p>25</p>
<p>Այնուհետև խնդրում եմ, որ յուրաքանչյուր աշակերտ աշխատանքային թերթիկը փոխանցի իր գույգին: Խնդրում եմ աշակերտներին գրի առնել բացթողումները և տալ հարցեր մինչև հասկանալը:</p>	<p>Ընթացքում հետևում եմ գույգերի քննարկումներին՝ լսելով բացատրությունը: Տալիս եմ աշակերտներին նախապես պատրաստված ընդհանրական հարցեր, որոնց օգնությամբ նրանք կարող են մինչև վերջ լավ հասկանալ իրենց ընկերոջ կողմից տրված բացատրությունը: Հ1 Ի՞նչ է ժամային գոտին Հ2 Քանի՞ ժամային գոտի ունի երկրագունդը Հ3 Ի՞նչ օրինաչափությամբ է բաժանվում ժամային գոտին Հ4 տեղական և գոտիական</p>	

	Ժամանակ, դեկրետային Ժամանակ:	
Միացյալ առաջադրանք		
Այնուհետև խնդրում եմ աշակերտներին ուշադիր հետևել ժամային գոտիների հաջորդական փոփոխությունների պատճառները, ուսումնասիրող առաջադրանքները, որի շրջանակում պետք է միասին աշխատեն: Մասնավորապես հանձնարարում եմ կազմել T-ձև աղյուսակ, որտեղ ներկայացվում է դեկրետային և տեղական ժամանակների տարբերությունները:	Նախապես պատրաստում եմ առաջադրանքը ուղորդող հարցերով, որոնք թույլ կտան աշակերտներին աշխատել հանձնարարության վրա: ԱԱ1 Ինչն է պատճառը որ երկրի վրա սահմանվել են ժամային տարբերություններ: ԱԱ2 Քանի աստիճան է կազմում ժամային գոտու տարածքը: ԱԱ3 Ինչ սկզբունքով են կատարել ժամային գոտու հաշվարկը: ԱԱ4 Ինչպես են անցկացվել ժամային գոտու սահմանները ցամաքի և օվկիանոսի վրա, որն է դրա տարբերության պատճառը:	
Խնդրում եմ, որպեսզի պատասխանները մանրամասն գրեն աղյուսակում և գրվածը պահպանեն:		
Ամրապնդման փուլ. Առաջադրում եմ հայտորոշիչ առաջադրանք.		
Տերմիններ	Ժամային գոտիներ, դեկրետային ժամանակ, ամսաթվի փոփոխման գիծ, տեղական և գոտիական ժամանակ:	
Տնային աշխատանք	Հանձնարարում եմ իրագործել հետևյալ. Սովորել դաս 4, աշխատել դ. խ. էջ 71 խնդ. 1,2,3,4.	

Առարկա/թեմա – Երկրի օրական, տարեկան պտույտները

Գործողություն	Հստակեցնող ուղղորդող կետեր, հստակ ձևակերպումներ, հարցեր, գաղափարներ և այլն	Տևող:
<p>Սովորողներին խնդրում եմ ուշադիր դիտել փորձը կամ տեսափորձը, այնուհետև մտածել առաջադրված հարցի վրա և փորձել պատասխանել դրան:</p> <p>Դասարանը բաժանում եմ երկու խմբի, որպեսզի միմյանց կողքին մշտապես նստող զույգերը սովորեն նոր մարդկանց հետ աշխատել</p>	<p>Փորձի ցուցադրում. Վերցնում ենք զլոբուս և որևէ լուսատու(երկրագնդի պտույտների հետևանքները ցույց տալու համար) Երկրի գնդաձևության և օրական պտույտի հետևանքով շարժվող մարմինների նկատմամբ առաջացած շեղող ուժի (կորիլիոսի ուժ) առկայությունը: Կամ կարելի է ցուցադրել համանման վիրտուալ փորձ:</p> <p>Աշակերտներին առաջադրում եմ հարցերը, լսելով պատասխանները կատարում ենք աշխատանքները (padlet)</p>	
<p>Խմբերին տալիս եմ երկու կապակցված տեքստ դեռևս չբացատրված թեմաների վերաբերյալ, մի տեքստ երկրագնդի տարեկան պտույտի հետևանքների վերաբերյալ</p> <p>Խնդրում եմ, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ուսումնասիրի իր տեքստը և աշխատանքի ընթացքում տեսրեքում կատարի գրառումներ</p>	<p>Նախապես պատրաստում եմ մեկ զույգ տեքստ/կյութ, որոնք աշակերտները տեսնում են էկրանին: Ամփոփ Անվանումները</p> <p>ԱԱ1 Որոշել արեգակի ճառագայթների անկման անկյունը տարբեր կիսագնդերում.հունիսին և դեկտեմբերին, մարտի 21-ին և սեպտեմբերի 23-ին</p>	
<p>Այնուհետև խնդրում եմ, որ յուրաքանչյուր աշակերտ ցածր ձայնով բացատրի իր թեման իր զույգին խնդրում եմ բացատրությունը լսող</p>	<p>Ընթացքում հետևում եմ զույգերի քննարկումներին՝ լսելով բացատրությունը: Տալիս եմ աշակերտներին նախապես պատրաստված</p>	

<p>աշակերտներին գրի առնել և տալ հարցեր մինչև հասկանալը:</p>	<p>ընդհանրական հարցեր, որոնց օգնությամբ նրանք կարող են մինչև վերջ լավ հասկանալ իրենց ընկերոջ կողմից տրված բացատրությունը:</p> <p>Հ1 Գարնանային գիշերահավասարի օրը տարվա որ եղանակն է հարավային կիսագնդում:</p> <p>Հ2 Հաշվեք արեգակի բարձրությունը հյուսիսային արևադարձում դեկտեմբերի 22-ին:</p> <p>Հ3 Ինչ ժամանակահատվածում և ինչ ուղղությամբ է պտտվում երկիրն արեգակի շուրջը:</p>	
<p>Միացյալ առաջադրանք</p>		
<p>Այնուհետև խնդրում են աշակերտներին գույգերով կատարել այնպիսի առաջադրանք, որի շրջանակում պետք է միասին աշխատեն հանձնարարված երկու տեքստերի շուրջ: Մասնավորապես հանձնարարում են կազմել Վենի դիագրամ, որը կարտահայտի երկրի օրական և տարեկան պտույտների նմանությունները և տարբերությունները:</p>	<p>Նախապես պատրաստում են գույգ տեքստի համար առաջադրանքներ իրենց ուղղորդող հարցերով, որոնք թույլ կտան աշակերտներին միասին աշխատել երկու տարբեր տեքստերի վրա:</p> <p>ԱԱ1 Առաջարկում են աշակերտներին պատասխանել .padlet.com-ի հարցերին:</p>	
<p>Խնդրում են, որպեսզի պատասխանները մանրամասն գրեն դիագրամի համապատասխան բաժիններում և գրվածը պահպանեն:</p>		
<p>Ամրապնդման փուլ. Առաջադրում են հայտորոշիչ առաջադրանք:</p>	<p>1) Լրացնել խաչբառը (https://learningapps.org/).</p>	

<p>Առաջադրանքները ստուգվում են բանավոր հարցման սկզբունքով, իսկ 2-րդ առաջադրանքը աշակերտների անմիջական մասնակցությամբ գրվում է գրատախտակին. Տրվում է ակնթարթային հետադարձ կապ, շտկվում են թյուրլմբռնումները:</p>	<p>2) Աշխատել հարցերի շուրջ (https://docs.google.com/forms/)</p>	
---	---	--

Եզրակացություն

Իմ կատարած հետազոտական աշխատանքից ես եկա այն եզրակացության, որ աշակերտի ուսման որակ կարելի է բարձրացնել նաև տարբերակված ուսուցման միջոցով:

Դասավանդման այս եղանակը մշակելիս՝ մշակեցի գործողությունների այնպիսի հաջորդականություն, որ երբ աշակերտի մոտ ինչ – որ քայլ, ինչ – ոչ գործողություն ստացվում է, նա ինքնուրույն պատրաստվում է հաջորդ քայլին և հաջորդ գործողությանը:

Այս դասին բոլորը հավասար են, բոլորը զբաղված են և բոլորն են յուրացնում դասապրոցեսում իրականացվող դասի բովանդակությունը:

Դասարանի բարձր առաջադիմությունը ապահովելու համար, առաջավոր և ետ մնացող աշակերտների համար կազմակերպեցի անհատական աշխատանքներ: Արդյունքում՝ ամբողջ դասարանը մասնակցում է դասապրոցեսին: Հետաքրքրությունը բարձրացնելու և աշխատանքի մեջ ներգրավելու համար ծրագրի սահմաններում նրանց տալիս եմ լրացուցիչ աշխատանքներ: Այս տեսակ առաջադրանքներն են հիմնականում բարձրացնում երեխաների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություն, մտածողություն, զննականություն և ուսման որակ: Այս դասերը հետաքրքիր և բովանդակալից են դասարանի բոլոր աշակերտների համար:

Մտորև ներկայացված դասապլաններից երևում է, որ տարբերակված ուսուցման մեթոդներով ես կարողացել եմ բոլոր աշակերտների համար ապահովել պետական չափորոշյով սահմանված նվազագույն պահանջները:

Գրականություն

1. Համացանց
2. 1. Մկրտչյան Մ. Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական և գործնական հարցերը: Երևան, հեղինակային հրատարակչություն, 2011, 148 էջ:
 2. 101 գաղափար նորորոկան մեթոդներ կիրառող ուսուցիչների համար: Բուդապեշտ, 2006, 63 էջ:
 3. Հնրակրթական պետական չափորոշիչներ: Երևան , 2011, 15 էջ:
 4. Աստվածատրյան Մ., Ավագյան Մ., Թերզյան Գ.: Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ: Երևան, 2014, 84 էջ:

